**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

N 08/21.1/4095-2020

«28» 07 2020 թ.

**«ՑԵՆՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ**

**ՊԱՐՈՆ Հ. ԻՅՈՎԱՆՈՎԻՉԻՆ**

**Հարգելի պարոն Իյովանովիչ**

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (Այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի և «ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/04» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 10-րդ կետի պահանջների՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

Նույն Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590009, էլ. փոստ՝ secretary.general@hti.am

Հաշվի առնելով, որ գնումների մասին ՀՀ օրենդրությամբ սահմանված ժամկետներում «ՑԵՆՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի նշված ընկերությունը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում, կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հարկ ենք համարում նաև նշել, որ հայտի ապահովման չափը կազմում է 2,500 /երկու հազար հինգ հարյուր/ եվրո, որը փոխանցված է ՀՀ ֆինանսների նախարարության կողից բացված գանձապետական «900008000466» հաշվեհամարին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ**

**գլխավոր քարտուղարին փոխարինող՝** **Գ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Գնումների բաժին
Հեռ. 010 59 00 47